

# Տեղադրման և շահագործման ուղեցույց

Switch Package 2 (SP2)



**ITT**

ENGINEERED FOR LIFE







# Բովանդակություն

<b>Ներածություն և Անվտանգություն</b> .....	2
Անվտանգության ծանուցման մակարդակներ .....	2
Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ .....	2
<b>Տեղափոխում և պահուստավորում</b> .....	4
Փականը գործածելու և փաթեթավորումից հանելու ուղեցույց .....	4
Պահուստավորման, հեռացման և վերադարձի պահանջներ .....	4
<b>Ապրանքի նկարագրություն</b> .....	5
Ընդհանուր նկարագրություն .....	5
Անջատիչի նույնականացում .....	5
<b>Տեղադրում</b> .....	7
Մոնտաժել անջատիչի փաթեթը հաղորդակին .....	7
Մոնտաժել անջատիչի փաթեթը 47 Advantage հաղորդակի վրա .....	7
<b>Շահագործում</b> .....	9
Անջատիչի շահագործման ուղեցույցներ .....	9
<b>Տեխսպասարկում</b> .....	10
Մոնտաժել անջատիչի փաթեթը .....	10
Կարգավորել անջատիչը .....	10
<b>Մասերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր</b> .....	12
Գծագրեր և մասեր .....	12
Հաղորդալարերի դիագրամներ .....	14

# Ներածություն և Անվտանգություն

## Անվտանգության ծանուցման մակարդակներ

Սահմանումներ

Անվտանգության ծանուցման մակարդակ	Ցուցում
 <b>ՎՏԱՆԳԱՎՈՐ Է.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կհանգեցնի մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 <b>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կարող է հանգեցնել մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 <b>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կարող է պատճառել թեթևից միջին աստիճանի մարմնական վնասվածք
 <b>Էլեկտրահարման վտանգ.</b>	Էլեկտրահարման վտանգի հավանականություն, եթե անվտանգության ցուցումները և իրահանգները պատշաճ կերպով պահպանված չեն
<b>ԾԱՆՈՒԹՅՈՒՄ.</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում կարող է առաջացնել անցանկալի հետևանք կամ վիճակ</li> <li>Վիճակ, որը կապված է մարմնական վնասվածքի հետ</li> </ul>

## Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ

Ընդհանուր նախազգուշական ցուցումներ

Այս ապրանքը նախազգուշակալի և արտադրվել է լավագույնս նյութերի օգտագործմամբ և բարձր վարպետությամբ և համապատասխանում է ոլորտում գործող բոլոր չափանիշներին: Այս ապրանքը պետք է օգտագործել միայն ITT ընկերության ցուցումներին համաձայն:



### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Փականի սխալ շահագործումը կարող է պատճառել մարմնական վնասվածք կամ վնաս հասցնել գույքին: Ընտրե՛ք ճիշտ նյութերից պատրաստված փականներ և բաղադրիչներ և համոզվե՛ք, որ դրանք համապատասխանում են Ձեր աշխատանքային պահանջներին: Այս ապրանքի ոչ ճիշտ կիրառում է հանդիսանում հետևյալը՝ առանց սահմանափակման.
  - Ճնշման կամ ջերմաստիճանի ցուցանիշների գերազանցում
  - Ապրանքի տեխսպասարկման իրականացում առանց համապատասխան պահանջները բավարարելու
  - Ապրանքի օգտագործում այնպիսի նյութերի համար, որոնք անհամատեղելի են նրա կառուցվածքի նյութերի հետ
  - Վերջնական սպառողը պետք է ապահովի փականի ճիշտ պահպանումը կամ ձեռնարկի միջոցառումներ վնասակար նյութերից պաշտպանելու համար, որպեսզի պաշտպանի իր աշխատակիցներին և շրջակա միջավայրը փականի թափոնումից:

### Որակավորումներ և փորձարկում

Փականի հավաքման, շահագործման, ստուգման և տեխսպասարկման համար պատասխանատու անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում: Շահագործող ընկերությունը պետք է կատարի հետևյալ առաջադրանքները.

- Սահմանել այս սարքավորման հետ աշխատող անձնակազմի բոլոր անդամների պատասխանատվություններն ու կարողությունները:
- Իրականացնել հրահանգավորում և ուսուցում:
- Ապահովել, որ անձնակազմի բոլոր անդամները լիարժեքորեն հասկանան շահագործման ցուցումների բովանդակությունը:

Հրահանգավորումը և ուսուցումը շահագործող կազմակերպության պատվերով կարող է իրականացնել ինչպես ITT ընկերությունը, այնպես էլ՝ փականը վաճառող ընկերությունը:

### Սույն կանոնները չպահպանելու հետ կապված վտանգներ

Անվտանգության բոլոր նախագգուշական ցուցումները չպահպանելու դեպքում կարող է պատահել հետևյալը.

- Մահ կամ լուրջ վնասվածք էլեկտրական, մեխանիկական և քիմիական ազդեցության հետևանքով
- Վնաս շրջակա միջավայրին վնասակար նյութերի արտահոսքի հետևանքով
- Ապրանքի վնասում
- Գույքի վնասում
- Չրկում վնասների դիմաց բոլոր տեսակի բողոքներ ներկայացնելու իրավունքից

### Շահագործման անվտանգության նախագգուշական ցուցումներ

Այս ապրանքը շահագործելիս՝ պետք է ի նկատի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Մի՛ թողեք ապրանքի տաք կամ սառը բաղադրիչները առանց ուշադրության, եթե դրանք կարող են վտանգի աղբյուր լինել:
- Մի՛ հեռացրեք շարժական մասերի կոնտակտային պաշտպանիչ միջադիրը, երբ ապրանքը շահագործման մեջ է: Երբեք մի՛ շահագործեք ապրանքը, եթե կոնտակտային միջադիրը տեղադրված չէ:
- Ապրանքից այլ իրեր մի՛ կախեք: Բոլոր տեսակի հարակից պարագաները պետք է ամուր կամ հիմնական ամրակցված լինեն:
- Մի՛ օգտագործեք ապրանքը որպես աստիճան կամ ձեռքի բռնակ:
- Մի՛ ներկեք այս ապրանքի հետ կապված նույնականացման պիտակը, նախագգուշական նշանները, ցուցումները կամ այլ նշանները:

### Տեխսպասարկման անվտանգության նախագգուշական ցուցումներ

Այս ապրանքի տեխսպասարկումն իրականացնելիս՝ պետք է ի նկատի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Դուք պետք է ապրանքը մաքրեք աղտոտումներից, եթե այն ենթարկվի վնասակար, օրինակ քիմիական քայքայիչ նյութերի ազդեցությանը:

### Չթույլատրված մասերի օգտագործում

Ապրանքի վերակազմավորումը կամ ձևափոխումը թույլատրվում է միայն ITT ընկերության հետ խորհրդակցելուց հետո: ITT ընկերության կողմից թույլատրված գործարանային պահեստամասերը և հարակից մասերը ապահովում են անվտանգություն: ITT ընկերության ոչ գործարանային մասերի օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից: ITT ընկերության մասերը չպետք է օգտագործել ITT ընկերության կողմից չառաքված մասերի հետ, քանի որ նմանատիպ ոչ ճիշտ օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից:

### Շահագործում անթույլատրելի եղանակով

Այս ապրանքի աշխատանքային հուսալիությունը երաշխավորվում է միայն այն դեպքում, եթե այն օգտագործվում է ըստ նշանակության: Նույնականացման պիտակի վրա և տվյալների մասնագրում նշված աշխատանքային սահմանափակումները չի կարելի գերազանցել ոչ մի հանգամանքում: Եթե նույնականացման պիտակը բացակայում է կամ մաշվել է, կապվեք ITT ընկերության հետ՝ հատուկ ցուցումներ ստանալու համար:

# Տեղափոխում և պահուստավորում

## Փականը գործածելու և փաթեթավորումից հանելու ուղեցույց



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Այս ապրանքը գործածելիս՝ մշտապես հետևեք պատահարները կանխարգելող գործող ստանդարտներին և կանոնակարգերին:

### Գործածման ցուցումներ

Ապրանքը գործածելիս՝ հետևե՛ք սույն ցուցումներին վնասներից խուսափելու համար.

- Այս ապրանքի հետ վարվե՛ք զգուշորեն:
- Նախքան տեղադրելը պահպանե՛ք ապրանքի պաշտպանիչ թասակները և ծածկերը:

### Փաթեթավորումը հեռացնելու ցուցումներ

Ապրանքի փաթեթավորումը հեռացնելիս՝ հետևե՛ք սույն ցուցումներին.

1. Ստուգե՛ք, որպեսզի առաքման ժամանակ ապրանքը զերծ լինի վնասվածքներից, կամ բացակայող մասեր չլինեն:
2. Ապրանքի ստացականի և բեռնագրի վրա շնե՛ք բոլոր վնասվածքները և բացակայող մասերը:
3. Մի՛ անցկացրեք էլեկտրական հաղորդալարեր կամ մի՛ բարձրացրեք դրանցով: Դա կարող է խախտել հոսանքատար լարերի անջատիչների կարգաբերումը:

## Պահուստավորման, հեռացման և վերադարձի պահանջներ

### Պահուստավորում

Եթե Դուք ապրանքը չեք տեղադրելու առաքումից անմիջապես հետո, ապա պետք է պահուստավորեք այն հետևյալ կերպ:

- Ապրանքը պահուստավորեք չոր սենյակում, որտեղ ջերմաստիճանը կայուն է:
- Համոզվե՛ք, որ ապրանքները դարսված չեն միմյանց վրա:

### Հեռացում

Այս ապրանքի և հարակից մասերի հեռացումը պետք է իրականացվի դաշնային, նահանգային և տեղական կանոնակարգերի համաձայն:

### Վերադարձ

Նախքան ապրանքի վերադարձը ITT ընկերությանը համոզվե՛ք, որ պահպանված են հետևյալ պահանջները.

- Ապրանքի վերադարձի հետ կապված հատուկ ցուցումների համար կապվե՛ք ITT ընկերության հետ:
- Փականը մաքրե՛ք բոլոր տեսակի վնասակար նյութերից:
- Բոլոր տեսակի հեղուկների համար, որոնք կարող են մնալ փականի վրա, լրացրե՛ք Նյութի անվտանգության ձևաթերթը կամ Գործընթացների ձևաթերթը:
- Գործարանից ստացե՛ք վերադարձի թույլտվություն:

# Ապրանքի նկարագրություն

## Ընդհանուր նկարագրություն

Անջատիչի փաթեթն առաջարկվում է մեխանիկական անջատիչների և մոտիկության սենսորների ամբողջական շարք՝ համապատասխանելու էլեկտրական և կառավարման համակարգերի ձեր մասնագրեթին: Անջատիչի փաթեթը կարող է մոնտաժվել Advantage և Advantage Piston հաղորդակի օդանշական հաղորդման գծերում:

## Անջատիչի նույնականացում



### Անջատիչի տեսակ

Ծածկագիր	Տեսակ	Նկարագրություն
SP2S	Մեխանիկական	Արժաթյա կոնտակտներ
SP2G	Մեխանիկական	Ոսկյա կոնտակտներ
SP2P	Մոտիկություն	3 հաղորդակարով PNP
SP2NP	Մոտիկություն	3 հաղորդակարով NPN
SP2Z	Մոտիկություն	2 հաղորդակարով "Z"
SP2N	Մոտիկություն	2 հաղորդակարով Namur

### Եվրոպական անջատիչների պիտակներ (արտադրանքը պատրաստված է Աբսիստերում, ՄԹ)

PROX SWITCH - SP2N  
 2-WIRE NAMUR NEMA 4X - IP66  
 Ui = 15V, Ii = 50mA, Pi = 120mW  
 Ci = 160nF, Li = 220μH, Co = 210nF, Lo = 6.95mH  
 II 2D Ex ia IIC T60 Db  
 II 2G Ex ia IIC T6 Gb EMT18ATEX0036X

ITT Industries Ltd  
 EX13 5HU

  0891

#### Նկար 1. SP2N

PROXIMITY SWITCH - SP2P  
 3-WIRE PNP  
 100mA MAX 30V DC  
 NEMA 4X IP66



ITT Industries Ltd  
 EX13 5HU

#### Նկար 2. SP2P


PROXIMITY SWITCH - SP2Z  
 2-WIRE Z  
 100mA MAX 30V DC  
 NEMA 4X IP66

ITT Industries Ltd  
 EX13 5HU


 

#### Նկար 3. SP2Z


ԱՄՆ-ի անջատիչների պիտակներ (արտադրանքը պատրաստված է Լանկաստերում, Պենսիլվանիա)




Նկար 4. SP2S




Նկար 5. SP2G




Նկար 6. SP2P



Նկար 7. SP2NP



Նկար 8. SP2Z



Նկար 9. SP2N



# Տեղադրում

## Մոնտաժել անջատիչի փաթեթը հաղորդակին

Այս հրահանգները բոլոր հաղորդակների համար են, բացի 3" և 4" սերիաների 47 Advantage հաղորդակից:

- Պատրաստեք հաղորդակը անջատիչի համար.
  - Հեռացրեք չորս չժանգոտվող պողպատյա պտուտակները հաղորդակի վերին կափարիչից:
  - Տեղադրեք փականն ամբողջությամբ բաց դիրքում:
  - Հեռացրեք պլաստիկ խրոցը մատնանշող սռնակից:
- Սահեցրեք անջատիչի ենթահանգույցը անջատիչի ադապտերից:

### ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Մի՛ վնասեք փոխարկիչի ներքին բաղադրիչ մասերը (հատկապես փոխարկիչի մեխանիկական լծակները):

- Կիրառեք Blue Loctite #242՝ #10-24 UNC թելերին:  
Այն անջատիչի հաղորդակի սռնակի վրա է:
- Անցկացրեք անջատիչի հաղորդակի սռնակը մատնանշող սռնակի մեջ, մինչ այն ներհրվի:
- Ապահովեք անջատիչի ադապտերը հաղորդակի վերին կափարիչին՝ ձգելով չորս վեցանիստ պտուտակները 5 դյույմ-ֆունտին (0.56 N-m):
- Սահեցրեք անջատիչի ենթահանգույցը ներքև անջատիչի ադապտերի վրայով և դրեք կապուղու մուտքը ցանկալի դիրքում:

### ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Մի՛ վնասեք փոխարկիչի ներքին բաղադրիչ մասերը (հատկապես փոխարկիչի մեխանիկական լծակները):

- Ցած սեղմեք անջատիչի ենթահանգույցը և ձգեք ամրացնող պտուտակը, որը տեղակայված է ստորին հատվածում, կողպելով միավորն իր տեղում:  
Ամրացնող պտուտակի պտտող մոմենտը չպետք է գերազանցի 5 դյույմ-ֆունտը (0.56 N-m):
- Հեռացրեք անջատիչի փաթեթի վերին կափարիչը:
- Ուղղորդեք դաշտային հաղորդալարերը և կապուղին դեպի անջատիչի փաթեթ:  
Լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Հաղորդալարերի դիագրամներ» բաժինը այս ձեռնարկում:
- Ստուգեք, որ անջատիչները ճիշտ են աշխատում՝ պտտելով փականը:  
Լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Կարգավորել անջատիչը» այս գլխում:
- Պտտեք անջատիչի փաթեթի վերին կափարիչը:  
Ապահովեք, որ օ-աձև օղակը մնա իր ակոսում:

## Մոնտաժել անջատիչի փաթեթը 47 Advantage հաղորդակի վրա

Այս հրահանգները 3" և 4" սերիաների 47 Advantage հաղորդակի համար են:

- Հեռացրեք պարզ պլաստմասե կափարիչը հաղորդակից:
- Կիրառեք Blue Loctite #242՝ #10-24 UNC թելերին՝ անջատիչի հաղորդակի սռնակի վրա:
- Անցկացրեք անջատիչի հաղորդակի սռնակը մատնանշող սռնակի մեջ, մինչ այն ներհրվի:
- Անցկացրեք մոնտաժվող ադապտերը վերին հաղորդակի ծածկույթի վրա, մինչև այն ներհրվի դեպի վերին հաղորդակի ծածկույթը:  
Հավաստիացեք, որ օ-աձև օղակը տեղում է՝ ադապտերի հիմնամասում:
- Սահեցրեք անջատիչի ենթահանգույցը ներքև մոնտաժվող ադապտերի ուղղությամբ և դիրքավորեք կապուղու մուտքերը առավել ցանկալի դիրքում (45° անջ):

6. Ցած սեղմեք անջատիչի ենթահանգույցը և ձգեք ամրացնող պտուտակը, որը տեղակայված է ստորին հատվածում, կողպելով միավորն իր տեղում:  
Ամրացնող պտուտակի պտտող մոմենտը չպետք է գերազանցի 0.56 N-m | 5 դյույմ-ֆունտը:
7. Հեռացրեք անջատիչի փաթեթի վերին կափարիչը:
8. Ուղղորդեք դաշտային հաղորդալարերը և կապուղին դեպի միացնող կոճղակներ:  
Առաջնորդվեք հաղորդալարերի գործարանային պիտակավորմամբ:
9. Ստուգեք, որ անջատիչները ճիշտ են աշխատում պտտելով փականը:  
Լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Կարգավորել անջատիչը» այս գլխում:
10. Պտտեք անջատիչի փաթեթի վերին կափարիչը:  
Ապահովեք, որ օ-աձև օղակը մնա իր ակոսում:

# Շահագործում

## Անջատիչի շահագործման ուղեցույցներ

- Անջատիչի փաթեթը ավտոկլավ չէ:
- Անջատիչի առավելագույն ջերմաստիճանը 65.5°C | 150°F է: (Կիրառվում է չպայթող ապրանքների համար)
- Անջատիչները և դիրքավորման հարմարանքները չեն կարող օգտագործվել միասին:

### SP2N վտանգավոր տեղանքի դասակարգում

⊕ II 2 G

⊕ II 2 D

Ex ia IIC T6 Gb

Ex ia IIIC T60 Db

Միջավայրի ջերմաստիճան -20°C-ից +40°C

ATEX վկայագրի համարը EMT18ATEX0036X (ապրանքների համար, որոնք պատրաստված են Աբսմինստերում, ՄԹ)

### SP2N վտանգավոր տեղանքի միացման պարամետրերը

#### Աղյուսակ 1. Կառուցի պարամետրերը

Պարամետր	Սնուցման ինտերֆեյս
$U_i$	15 V
$I_i$	50 mA
$P_i$	120 mW
$C_i$	160 nF
$L_i$	220 $\mu$ H
$C_o$	210 nF
$L_o$	6.95 mH

1. Մալուխի երկարությունը, որն օգտագործվում է կառավարման բլոկը միացնելու համար SP2N-ին անջատիչի փաթեթը պետք է սահմանվի՝ օգտագործելով ամենածանրաբեռնված էլեկտրական պարամետրերը, որոնք տրված են մալուխի արտադրողի կողմից կամ հաշվի առնելով ավելացող  $C_c$  (մալուխի էլեկտրատարություն) և  $L_c$  (մալուխի ինդուկտիվություն) մինչև 200 pF/m և 1  $\mu$ H/m:
2. Բաշխված ինդուկտիվությունը և էլեկտրատարությունը (օրինակ՝ մալուխում)՝ միացված SP2N-ին անջատիչի փաթեթը չպետք է գերազանցի  $L_o$  և  $C_o$  (տես՝ Կառուցի պարամետրերի աղյուսակը):
3. Անջատիչի փաթեթը՝ SP2N պետք է միայն սնուցվի ATEX-ի կողմից հաստատված ինքնապաշտպանական ապահով պատնեշով:
4. Ոչ մետաղական ներդիրի էլեկտրոստատիկ լիցքավորման/լիցքաթափման վտանգից խուսափելու համար մշտապես մաքրեք սարքավորումը միայն խոնավ կտորով:

# Տեխնապատկեր

## Մոնտաժել անջատիչի փաթեթը

Այս հրահանգները այն մասին են, թե ինչպես պետք է մոնտաժել անջատիչի փաթեթը սպասարկումից կամ վերանորոգումից հետո:

Հավաստիացե՛ք, որ բոլոր օ-աձև օղակները անջատիչի ադապտերի վրա են և պատված են Dow 111-ով:

1. Կիրառե՛ք Blue Loctite #242՝ #10-24 UNC թելերին:
2. Անցկացրե՛ք անջատիչի հաղորդակի սռնակը մատնանշող սռնակի մեջ, մինչ այն ներհրվի:
3. Ապահովե՛ք անջատիչի ադապտերը հաղորդակի վերին կափարիչին՝ ձգելով չորս վեցանիստ պտուտակները 5 դյույմ-ֆունտին (0.56 N-m):
4. Հեռացրե՛ք անջատիչի փաթեթի վերին կափարիչը:
5. Սահեցրե՛ք անջատիչի ենթահանգույցը ներքև անջատիչի ադապտերի վրայով և դրե՛ք կապուղու մուտքը ցանկալի դիրքում:

### ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Մի՛ վնասե՛ք փոխարկիչի ներքին բաղադրիչ մասերը (հատկապես փոխարկիչի մեխանիկական լծակները):

6. Ցած սեղմե՛ք անջատիչի ենթահանգույցը և ձգե՛ք ամրացնող պտուտակը, որը տեղակայված է ստորին հատվածում, կողպելով միավորն իր տեղում:  
Ամրացնող պտուտակի պտտող մոմենտը չպետք է գերազանցի 5 դյույմ-ֆունտը (0.56 N-m):
7. Ուղղորդե՛ք դաշտային հաղորդալարերը և կապուղին դեպի անջատիչի փաթեթ:  
Լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Հաղորդալարերի դիագրամներ» բաժինը այս ձեռնարկում:
8. Ստուգե՛ք, որ անջատիչները ճիշտ են աշխատում պտտելով փակակնը:  
Լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Կարգավորել անջատիչը» այս գլխում:
9. Պտտե՛ք անջատիչի փաթեթի վերին կափարիչը:  
Ապահովե՛ք, որ օ-աձև օղակը մնա իր ակոսում:

## Կարգավորել անջատիչը



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Մի՛ հեռացրե՛ք անհպակավոր ինդուկտիվ փոխարկիչը՝ միացնելով փակակն անմիջապես հոսանքի աղբյուրին: Փոխարկիչին կարող էք անուղղելի և անմիջական վնաս հասցնել:

Անջատիչի փաթեթը նախապես կարգավորված է գործարանում: Միայն նվազագույն կարգաբերում է անհրաժեշտ՝ հաղորդակը հարմարեցնելու համար:

1. Հեռացրե՛ք անջատիչի փաթեթի վերին ծածկույթը:
2. Ստուգե՛ք, որ անջատիչի փաթեթն ամրացնող պտուտակը պինդ ձգված է:
3. Տեղադրե՛ք փակակնը ամբողջությամբ բաց դիրքում:
4. Կրկնե՛ք ստորև քայլերը բաց և փակ անջատիչի համար.
  - a) Միացրե՛ք համապատասխան թեստավորման սարքը անջատիչի տերմինալներին:

Անջատիչի տեսակ	Թեստավորման սարք
Մեխանիկական	Ավանդական վոլտմետր
Մոտիկություն	Ինդուկտիվ մոտիկության փորձասարք (օրինակ՝ Pepperl+Fuch-ի մոդել #1-1305)
Ինդուկտիվ մոտիկություն	Լիցքավորե՛ք ճիշտ բեռնվածությունը և սնուցման լարումը


- b) Թեթևակիորեն թուլացրե՛ք անջատիչի վրայի երկու պտուտակները:

- c) Շարժեք անջատիչը վերև կամ ներքև իր վահանակով դեպի լավագույն դիրքի հարմարեցնելով պտուտակը, որը հասանելի է վերևից: ITT-ն խորհուրդ է տալիս երկու շրջապտույտ անցկացնել ձգման վայրում:
  - d) Ձգեք անջատիչի վրայի երկու պտուտակները:
  - e) Տեղադրեք փականը ամբողջությամբ փակ դիրքում:
5. Փոխարինեք անջատիչի փաթեթի վերին ծածկույթը:


# Մատերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր

## Գծագրեր և մատեր


### Մատերի ցանկ




Նկար 10. Առջևի տեսք




Նկար 11. Հետևի տեսք




Նկար 12. Ներքին տեսք



Նկար 13. 3 դյույմ և 4 դյույմ սերիաների 47 դետալ



Նկար 14. Հիմնական տեսք



Նկար 15. Դետալ

Անվանում	Նկարագրություն	Նյութ	Քանակ
1	Ստորին հատված	պլաստիկ	1

Անվանում	Նկարագրություն	Նյութ	Քանակ
2 <sup>1</sup>	Անջատիչի ադապտեր	չժանգոտվող պողպատից	1
3	Անջատիչ	-	2
4	Ամրակցիչ պտուտակ	չժանգոտվող պողպատից	4
5	Չսպանակածն տափօղակ	չժանգոտվող պողպատից	4
6	Վերին կափարիչ	պլաստիկից	1
7	Անջատիչի հաղորդակ	ալյումինից	1
8	Անջատիչի mtg բարձակ	չժանգոտվող պողպատից	1
9 <sup>2</sup>	Անջատիչի հաղորդակի սռնակ	չժանգոտվող պողպատից	1
10 <sup>3</sup>	O-աձև օղակ #117	Buna-N	1
11 <sup>4</sup>	Անջատիչի ադապտեր	պլաստիկից	1
12 <sup>3</sup>	O-աձև օղակ #116	Buna-N	1
13 <sup>3</sup>	O-աձև օղակ #152	Buna-N	1
14	Սևեռամանեկ	չժանգոտվող պողպատից	1
15 <sup>5</sup>	Պտուտակ - FI Hex Soc Ho	չժանգոտվող պողպատից	4
16	Ամրացնող պտուտակ	չժանգոտվող պողպատից	1
17	Սևեռիչ տափօղակ	չժանգոտվող պողպատից	3
18	Տափօղակ - զսպանակի ֆիքսատոր	չժանգոտվող պողպատից	3
19	Կափարիչի պտուտակ	չժանգոտվող պողպատից	3
20	Միացնող կոճղակ	-	1
21	Ամրակցիչ պտուտակ	չժանգոտվող պողպատից	2
22	Ձգվող բարձակ	չժանգոտվող պողպատից	2
23	Ամրացնող օղակ	պողպատից	2
24	Սևեռիչ տափօղակ	չժանգոտվող պողպատից	4
25 <sup>5</sup>	Ձևափոխված պտուտակ	չժանգոտվող պողպատից	2
26	Անջատիչի ադապտեր	պլաստիկից	1
27 <sup>4</sup>	Սևեռիչ տափօղակ	չժանգոտվող պողպատից	4
28 <sup>4</sup>	Կափարիչի պտուտակ	չժանգոտվող պողպատից	4
29	Անջատիչի հաղորդակի սռնակ	չժանգոտվող պողպատից	1
30 <sup>6</sup>	Անջատիչի մեկուսիչ	Nomex aramid	2
31	Անջատիչի փաթեթի պիտակ	Mylar	1
32	Պտուտակ	չժանգոտվող պողպատից	2
33 <sup>7</sup>	Հաղորդակի անջատիչ	չժանգոտվող պողպատից	2
34	Անջատիչի (բաց) պիտակ	Mylar	1
35	Անջատիչի (փակ) պիտակ	Mylar	1
36 <sup>13</sup>	O-աձև օղակ #128	Buna-N	1

1 Օգտագործվում է 3 - 4 դյույմում

2 Օգտագործվում է Bio-Tek - 2 դյույմում

3 Առաջարկվող պահեստամաս

4 Օգտագործվում է Bio-Tek - 1 դյույմում

5 Օգտագործվում է 1.5 - 2 դյույմում

6 Օգտագործվում է միայն մեխանիկական անջատիչների հետ:

7 Օգտագործվում է միայն անհպակ անջատիչների հետ:

Անվանում	Նկարագրություն	Նյութ	Քանակ
37 <sup>1</sup>	Չսպանակավոր կոճամ	ջժանգոտվող պողպատից	2


## Չաղորդալարերի դիագրամներ

<p>MECHANICAL SW SILVER CONT MAX. RATING 10 A, 250 VAC</p> <p>FIELD FACTORY</p> <p>1 ● SW1 NC 2 ● SW1 NO 3 ● SW1 COM 4 ● SW2 COM 5 ● SW2 NO 6 ● SW2 NC 7 ● SOLENOID 8 ● SOLENOID</p> <p>SW1 = CLOSE SW2 = OPEN</p> <p>NEMA 4X IP 66</p>	<p>MECHANICAL SW GOLD CONT MAX. RATING 1 A, 125 VAC</p> <p>FIELD FACTORY</p> <p>1 ● SW1 NC 2 ● SW1 NO 3 ● SW1 COM 4 ● SW2 COM 5 ● SW2 NO 6 ● SW2 NC 7 ● SOLENOID 8 ● SOLENOID</p> <p>SW1 = CLOSE SW2 = OPEN</p> <p>NEMA 4X IP 66</p>	<p>PROXIMITY (E2) 3-WIRE, PNP MAX. RATING 100mA 10-30VDC</p> <p>FIELD FACTORY</p> <p>1 ● SW1 SIG 2 ● SW1 +24 V 3 ● SW1 COM 4 ● SW2 COM 5 ● SW2 +24 V 6 ● SW2 SIG 7 ● SOLENOID 8 ● SOLENOID</p> <p>SW1 = CLOSE SW2 = OPEN</p> <p>NEMA 4X IP 66</p>
<p>Նկար 16. SP2S</p>	<p>Նկար 17. SP2G</p>	<p>Նկար 18. SP2P</p>
<p>PROXIMITY (E) 3-WIRE, NPN MAX. RATING 100mA 10-30VDC</p> <p>FIELD FACTORY</p> <p>1 ● SW1 SIG 2 ● SW1 +24 V 3 ● SW1 COM 4 ● SW2 COM 5 ● SW2 +24 V 6 ● SW2 SIG 7 ● SOLENOID 8 ● SOLENOID</p> <p>SW1 = CLOSE SW2 = OPEN</p> <p>NEMA 4X IP 66</p>	<p>PROXIMITY (Z) 2-WIRE Z MAX. RATING 100mA 10-30VDC</p> <p>FIELD FACTORY</p> <p>1 ● SW1 + 2 ● SW1 - 3 ● OPEN 4 ● SW2 + 5 ● SW2 - 6 ● OPEN 7 ● SOLENOID 8 ● SOLENOID</p> <p>SW1 = CLOSE SW2 = OPEN</p> <p>NEMA 4X IP 66</p>	<p>PROXIMITY (N) 2-WIRE NAMUR MAX. RATING 3mA, 5-25VDC</p> <p>FIELD FACTORY</p> <p>1 ● SW1 + 2 ● SW1 - 3 ● OPEN 4 ● SW2 + 5 ● SW2 - 6 ● OPEN 7 ● SOLENOID 8 ● SOLENOID</p> <p>SW1 = CLOSE SW2 = OPEN</p> <p>NEMA 4X IP 66</p>
<p>Նկար 19. SP2NP</p>	<p>Նկար 20. SP2Z</p>	<p>Նկար 21. SP2N</p>





Այս փաստաթղթի ամենավերջին տարբերակը  
տեսնելու և մանրամասն տեղեկատվության համար  
այցելե՛ք մեր կայքէջը.  
[www.engvalves.com](http://www.engvalves.com)



ITT Engineered Valves  
33 Centerville Road  
Lancaster, PA 17603  
USA

© 2018 ITT կորպորացիա  
Բնօրինակ ցուցումները ներկայացված են անգլերեն լեզվով: Բոլոր ոչ  
անգլերեն տարբերակները համարվում են թարգմանություն  
բնօրինակից:

Ձև IOM-SP2.hy-am.2018-10